ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1962 Общественные науки

«ՊՐԱՎԴԱՑԻ» 50-ԱՄՅԱԿԻՆ

Մ. Ն. Հակոբյան

ԼԵՆԻՆԸ ԵՎ «ՊՐԱՎԴԱՆ»

1912 թ. նոր հզոր ռևոլյուցիոն վերելքի պայքարներում ծնվեց առաջին մարքսիստական լեգալ մասսայական ամենօրյա թերթը՝ «Պրավդան»։ Նրա նախաձեռնողն ու ստեղծողը Պետերբուրգի պրոլետարիատն էր, որ բոլշևիկների ղեկավարությամբ երկարատև պայքար ծավալեց իր քաղաքական օրգանի համար և փայլուն արդյունքի հասավ։

«Պրավդայի» հիմնադրման ամբողջ աշխատանքը, շուրջ քսանվեց ամսյա նրա բուռն գործունեությունը 1912—1914 թթ., ընթանում էր Վ. Ի. Լենինի ու նրա գլխավորած Կենտրոնական Կոմիտեի ամենօրյա ղեկավարությամբ։ Իր ստեղծման ու իր բոլոր հաջողությունների համար «Պրավդան» ամենից առաջ և ամենից շատ պարտական է պարտիայի մեծ առաջնորդին։ Բոլշևիկյան նոր տիպի մամուլի ստեղծողը, նրա սկզբունքների մշակողը, նրա մշտական գաղափարական ղեկավարը ամենօրյա ուշադրություն է դարձրել «Պրավդային», մշտապես ուղղություն է տվել նրա գործունեությանը։

Սույն հոդվածի նպատակն է թերթի 50-ամյակի առթիվ անդրադառնալ Վ. Ի. Լենինի գործունեության մի քանի կողմերին՝ 1912—1914 թթ. «Պրավդային» ցույց տված ղեկավարության ասպարեզում։

* * *

«Պրավդայի» հրապարակ գալուց դեռ շատ առաջ Վ. Ի. Լենինը հսկայական ուշադրություն է դարձրել ռևոլյուցիոն մամուլի սկզբունքների մշակմանը՝ զարգացնելով ու հարստացնելով Մարքսի ու Էնգելսի դրույթները ռևոլյուցիոն մամուլի մասին։ «Մեր մերձավորագույն խնդիրը» (1899) հոդվածում, նա խոսելով հզոր պարտիա ստեղծելու անհրաժեշտության մասին, նկատում է, «որ դրա

---

[1] *Հակառակ դրան, պատմական իրողությունները շրջանցելով, մի շարք հոդվածներում ու առանձին գրքերում մինչև վերջին ժամանակներս առաջին պլան են մղվել Ստալինի ծառայությունները «Պրավդայի» հիմնադրման և ղեկավարման գործում։ Վերջին տարիներին, սովետական պատմաբանները զգալիորեն լրացրել են այդ բացը, հատուկ ուսումնասիրություններս են նվիրել Լենինը և «Պրավդան» թեմային։ Դրանցից են՝ Գ. Վ. Պետրյակովի («Вопросы истории», 1956, № 11), Վ. Տ. Լոգինովի («Вопросы истории КПСС» 1957, № 1) և Վ. Պ. Բուդնիկովի («Вопросы истории, 1960, № 4) հոդվածները։ Վերջին տարիներին հրատարակված գրքերից, որոնք մեծապես նպաստում են նաև այդ թեմայի պարզաբանմանը, հարկ է հիշատակել մասնավորապես «Ленин о печати» և Ленин—журналист и редактор» ժողովածուները՝ նախաբաններով և գիտական հարուստ ապարատներով։ Իսկ բոլորովին վերջերս հրատարակվեց «Ленин и Правда» գիրքը, որի հարուստ արխիվային փաստաթղթերի, այդ թվում մինչև այդ չհրապարակված նյութերի հիման վրա գրել է Վ. Տ. Լոգինովը։*

համար մենք մեր մերձավորագույն նպատակը պետք է դարձնենք—պարտիայի կանոնավոր լույս տեսնող և բոլոր տեղական խմբերի հետ սերտորեն կապված օրգանի կազմակերպումը»[2]։

Դա է, ըստ Լենինի, այն բանալին, որ տանում է դեպի բանվորական շարժման լայն կազմակերպումը, քաղաքական ազատության համար մղվող պայքարում բոլոր ուժերի համախմբումը, սոցիալ-դեմոկրատների միավորումը։ Եվ Լենինը դնում է այդպիսի «օրգանի կազմակերպման վրա բոլոր ուժերը կենտրոնացնելու» խնդիրը։ Երկու տարի հետո՝ 1901 թ., երբ կյանքը, ռևոլյուցիոն շարժումների ղեկավարման անհրաժեշտությունը հրամայարար առաջ քաշեցին մարքսիստական պարտիայի կառուցման պրակտիկ խնդիրը և երբ ծառացավ «ինչի՞ց սկսել» անհետաձգելի հարցը, Լենինն առանց տատանվելու պատասխանեց. «Մեր կարծիքով, գործունեության ելակետը, մեր ցանկացած կազմակերպությունն ստեղծելու առաջին գործնական քայլը, վերջապես, այն հիմնական թելը, որը բռնելով մենք կկարողանայինք անշեղորեն զարգացնել, խորացնել և ընդարձակել այդ կազմակերպությունը,—պետք է լինի համառուսական քաղաքական լրագիր հիմնելը։ Ամենից առաջ մեզ լրագիր է հարկավոր...»։ Լենինը ձգտում էր ստեղծել այնպիսի լրագիր, որը «... չի սահմանափակվում միմիայն գաղափարներ տարածելով, միմիայն քաղաքական դաստիարակությամբ և քաղաքական դաշնակիցներ ներգրավելով։ Լրագիրը ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ և կոլեկտիվ ագիտատոր է, այլև կոլեկտիվ կազմակերպիչ է»[4]։ Լենինյան այս փայլուն բնորոշումը, որ արտացոլում է մամուլի մասին պարտիայի հիմնական հայացքը և որը Լենինը երկար տարիներ շարունակ զարգացնում էր, նոր լույս սփռեց մամուլի դերի գնահատման ասպարեզում, ընդարձակեց քաղաքական լրագրի գործունեության շրջանակները, նրան դարձրեց այն հենքը, որի օգնությամբ պիտի իրար հետ կապվեին ու համագործակցեին տեղական կազմակերպությունները, որի շնորհիվ կստեղծվեր մշտական, գործոն ու միասնական պարտիա՝ իր գործակալների լայն, ամբողջ երկիրն ընդգրկող ցանցով։ Այդ պլանն «Ինչի՞ց սկսել» աշխատությունից հետո իր նոր զարգացումն ու հիմնավորումը ստացավ Լենինի «Ի՞նչ անել» հանճարեղ երկում, ուր նա միաժամանակ արծարծեց քաղաքական թերթի հետ կապված սկզբունքային հարցերը։

Ոչ միայն իր այդ երկու գլխավոր աշխատություններում, այլև դարեզրի և Հետագա շրջանի մի շարք ուսումնասիրություններում, հոդվածներում ու նամակներում Լենինն առաջ է քաշել ու զարգացրել նոր տիպի մամուլի ստեղծման սկզբունքները, մշակել նրա գործունեության հիմունքները։ 1899 թ. գրած հոդվածներից մեկում Լենինը հիմնավորել է այն անկյունաքարային դրույթը, որ թերթը պետք է իր ընթերցող-բանվորներին օգնի բարձրացնելու իրենց մակարդակը, նրանց մեջ մտցնի սոցիալիզմի և քաղաքական պայքարի գաղափարները։ «...Այն լրագիրը,—գրել է Լենինը,— որը կցանկանա դառնալ բոլոր ռուս սոցիալ-դեմոկրատների օրգանը, պետք է կանգնած լինի առաջավոր բանվորների մակարդակի վրա...»։

---

2 Նույն տեղում, հ. 4, էջ 272 (այսուհետև և հետագա բոլոր տեղերում ընդգծումները բնագրինն են)։

3 Նույն տեղում, հ. 5, էջ 20։

4 Նույն տեղում, էջ 23։

5 Նույն տեղում, հ. 4, էջ 355։

Մի այլ կարևորագույն փաստաթղթում («Իսկրայի» և «Զարյայի» խմբագրության հայտարարության նախագիծը») Լենինը գտնում է, որ պարտիայի օրգանը մեծ տեղ պետք է հատկացնի թեորիական հարցերին, ռուս իրականության մեջ այդ թեորիայի կոնկրետ կիրառմանը, և վճռարար հանդես է գալիս այն սխալ դրության դեմ, թե բանվորական մամուլը չպետք է զբաղվի թեորիայի, պիտության, քաղաքականության, պարտիական կազմակերպության և այլ հարցերով։

Իր առաջադրած սկզբունքների արմատավորման, համառուսական քաղաքական լրագրի իր պլանի իրագործման համար Լենինը տիտանական աշխատանք ծավալեց։ Դա նախ մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ ռուսական սոցիալ-դեմոկրատական ուժերը դեռ գործում էին իրարից անջատ-անջատ, երբ տակավին գոյություն չուներ միասնական մարքսիստական պարտիա՝ միասնական ծրագրով, կանոնադրությամբ, տակտիկայով, ղեկավար կենտրոնով, գաղափարական ու կազմակերպական մշակված հիմունքներով։ Դա նաև մի ժամանակաշրջան էր, երբ բանվորական շարժումը վերելք էր ապրում, իսկ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ներսում դրսևորվում էր գաղափարական տարընթացությունը, երբ «սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ակնհայտորեն ետ էին մնում մասսաների տարերային վերելքից»[6], երբ Արևմտյան Եվրոպայում հանդես եկան մարքսիզմի ռևիզիոնիստները, իսկ Ռուսաստանում դեռ դերակշիռ դեր էր դրավում միջազգային օպորտունիզմի տարատեսակը՝ «էկոնոմիզմը»։

Այդ դժվարին պայմաններում ստեղծված «Իսկրան», «Լենինի պլանով... դարձավ պարտիական ուժերի միավորման, պարտիական կադրերի հավաքման ու դաստիարակության կենտրոն, հստակ մարքսիստական ծրագիր ռևոլյուցիոն տակտիկա, միասնական կամք և երկաթե կարգապահություն ունեցող համառուսական մարտական կենտրոնացված պրոլետարական պարտիայի մեջ դրանց համախմբման կենտրոն»[7]։ Լենինյան «Իսկրայի» առաջ քաշած և մշակած սկզբունքներով էլ ստեղծվեց մարքսիստական պարտիա՝ իր անդրանիկ ռևոլյուցիոն ծրագրով, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման նպատակադրումով։

«Պրավդան» ևս հանդես եկավ իբրև բոլշևիկյան պարտիայի, իբրև Վ. Ի. Լենինի հարազատ զավակ և նոր պայմաններում պետք է կատարեր այն նույն դերը, ինչ որ լենինյան «Իսկրան», որի հարուստ փորձը, որի փառավոր տրադիցիաները նա ժառանգեց ու զարգացրեց սրբությամբ։ Դա հենց այն մասսայական բոլշևիկյան թերթն էր, որի ստեղծման անհրաժեշտությունը մատնանշում էր Լենինը նոր ռևոլյուցիայի վերելքի սկզբնավորման պահին։

Ղեկավարելով պարտիայի տեղական բջիջներում, բանվորական լեգալ կազմակերպություններում, մասնավորապես բոլշևիկյան «Զվեզդա» թերթի էջերում մասսայական լեգալ թերթ ստեղծելու համար մղված լայն աշխատանքը, նոր տիպի մամուլի տեսարանը դարձավ ամենօրյա «Պրավդայի» ղեկավարը և նրա գոյության ամբողջ ընթացքում երբեք չշեղեց իր ուշադրությունը նրանից։

---

6 «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմություն», Երևան, 1959, էջ 52։

7 «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի հիսուն տարին», 1903—1953), Հայպետհրատ, 1953, էջ 7։

* *

«Պրավդայի» հրատարակության թույլտվությունը ցարական իշխանությունները տվեցին հին պուտիլովական Ն. Պոլետաևի անունով, որն այն ժամանակ (1907—1912) Պետական Դումայի դեպուտատներից մեկն էր և դարձավ թերթի պաշտոնական հրատարակիչը։ Նրա սենյակում էլ ու նրա ակտիվ մասնակցությամբ կազմվեց թերթի առաջին համարը, որ հրապարակ եկավ ապրիլի 22-ին (մայիսի 5-ին)՝ մարքսիզմի մեծ հիմնադիր Կարլ Մարքսի ծննդյան օրը։ Այդ օրը Լենինը Փարիզից ուղարկած իր նամակներից մեկում գրում էր. «Շտապ տեղեկացրեք ամենօրյա թերթի («Պրավդայի»—Մ. Հ.) մասին։ Ինչպիսի ծավալ է լինելու։ Ինչ չափի հոդվածներ կարելի է ուղարկել»[8]։ Եվ շուտով «Պրավդայում» Լենինն իրոք հանդես է գալիս իր անդրանիկ՝ «Տրուդովիկները և բանվորական դեմոկրատիան»[9] հոդվածով։ Շատ չանցած՝ հունիսի առաջին կեսին Լենինը Կրուպսկայայի հետ Փարիզից փոխադրվում է սահմանամերձ՝ Կրակով քաղաքը։ Ոստիկանատանը տրված հարցերից մեկին պատասխանելով, նա ասաց. «Հանդիսանում եմ Պետերբուրգում հրատարակվող ռուսերեն «Պրավդա» դեմոկրատական թերթի և «Սոցիալ-Դեմոկրատ» խորագրով Փարիզում հրատարակվող ռուսերեն թերթի թղթակիցը, ինչը որ իմ գոյության աղբյուրն է»[10]։

Կրակովից Լենինը սկսեց ղեկավարել «Պրավդայի» և պարտիայի ամբողջ գործունեությունը։

«Պրավդայում» Լենինի տպագրած հոդվածները այն բանի ամենափայլուն դրսևորումն են, թե ինչպես էր մեծ առաջնորդը իրագործում իր իսկ տեսական դրույթները։ Այն բոլոր խնդիրները, որ նա դնում էր ռևոլյուցիոն մամուլի առջև, այն բոլոր առաջադրանքները, որ նա տալիս էր աշխատավորության համար պայքարող ժուռնալիստ-հրապարակախոսներին, անգերազանցելի կերպով ու ամենալայն մասշտաբներով կենսագործեց հենց ինքը Լենինը՝ միշտ և ամեն ինչում հարազատ մնալով պարտիայի որոշումներին, նրա Կենտրոնական Կոմիտեի դիրեկտիվներին, միշտ առաջնորդվելով ռևոլյուցիայի շահերով, պարտիայի ու աշխատավորության շահերով։

«Ես այդ թերթում,— նշել է նա հետագայում,— գրում էի համարյա ամեն օր Կրակովից. որտեղ ես այդ ժամանակ ապրում էի որպես քաղաքական էմիգրանտ։ Դումայի՝ մեր պարտիային պատկանող սոցիալ-դեմոկրատական դեպուտատները... միշտ գալիս էին Կրակով, և մենք խորհուրդ էինք անում, թե ինչպիսի ուղղություն տանք թերթին»[11]։ Սկսած թերթի 13 և 14-րդ համարներից, երբ Պ.Պ. ծածկանվամբ[12] «Պրավդայում» լույս տեսավ Լենինի առաջին հոդվածը, թերթի էջերում պարբերաբար տեղավորվում էին նրա հոդվածներն ու նոթերը։ «Պրավդայում» լույս տեսան Վ. Ի. Լենինի գրչին պատկանող 284 հոդված ու այլ նյութեր։

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 18։

9 Տե՛ս «Правда», 1912, № 13 և № 14 կամ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 18, էջ 27—36։

10 «Ленинский сборник», II, стр 471 և Վ. Ի. Լենին, Կենսագրություն, Հայպետհրատ, 1961, էջ 279։

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 483։

12 Վ. Ի. Լենինը «Պրավդայի» էջերում հանդես է եկել նաև Б. Ж., В., Б. Б., Н. Б., Т., В., П., И. В., С., ФР., М. Н., И., Постоянный читатель „Правды", В. Ильин, W., Вилям Фрей. Правдист, Читатель, Статистик և այլ ծա. կանուններով։

Անհնար է մի համառոտ հոդվածի սահմաններում անդրադառնալ Վ. Ի. Լենինի «Պրավդայում» տպագրած բոլոր նյութերին, ուստի և համառոտակի կանգ առնենք նրանցից միայն մի քանիսի վրա։

Իր առաջին հոդվածում Լենինը ուշադրությունը սրում է ժամանակի գլխավոր հարցերից մեկի՝ դումայական ընտրությունների վրա։ Ապա նա այդ հարցերին է նվիրում իր մի շարք ելույթները։ «Լիբերալներն ու կադետները», «Կադետները և դեմոկրատիան», «Լիբերալների արշավանքը», «Սկզբունքային հարցեր», «Հոգևորականությունը և քաղաքականությունը», «Կադետների և նովովրեմյայականների միությունը», «Պետերբուրգի բանվորների դեպուտատը», «Կադետները և նացիոնալիստները», «Բանվոր դասակարգը և նրա «պառլամենտական» ներկայացուցչությունը»,— ահա դումայական ընտրությունների առթիվ 1912 թ. «Պրավդայում» Լենինի տպագրած հոդվածներից մի քանիսը։ Դրանք այն հոդվածներն են, որոնք Լենինի գրած այլ աշխատությունների հետ միասին մշակում էին բոլշևիկների ընտրական պլատֆորմն ու տակտիկան, մերկացնում ցարիզմի և նրա կամակատարների մեքենայությունները ընտրությունների ժամանակ, ուսուցանում, թե ինչպես պետք է ընտրական կամպանիան ծառայեցնել հակառակորդների դեմ մղվող պայքարին, աշխատավորների քաղաքական դաստիարակության գործին։

Լենինի հոդվածների մի զգալի մասը նվիրված է մենշևիկ-լիկվիդատորների դեմ մղվելիք բոլշևիկյան պայքարին։ Պրոլետարիատի դասակարգային այդ կատաղի թշնամիների մերկացմանը Վ. Ի. Լենինը առավելագույն ուշադրություն է նվիրել և մշտապես պահանջել, որ «Պրավդան» բոլշևիկյան արմատական դիրք գրավի նրանց նկատմամբ, պարբերաբար մերկացնի նրանց։ Այդ բանի առաջին և փայլուն օրինակները տվեց հենց ինքը Լենինը, որը հանդես եկավ բազմաթիվ մարտաշունչ հոդվածներով՝ ուղղված մենշևիկ-լիկվիդատորների, տրոցկիստների ու այլ դույնի օպորտունիստների դեմ։

1912—1914 թթ. «Պրավդայում» հրատարակված լենինյան շատ հոդվածներ նվիրված են մարքսիստական թեորիայի զանազան հարցերին։ Դրանցից է «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը» հակիրճ, բայց և միաժամանակ փայլուն խորությամբ գրված հոդվածը, որ հրապարակ եկավ թերթի 1913 թ. մարտի 1-ի համարում, նվիրված պրոլետարիատի մեծ կորիֆեյի մահվան 30-ամյակին։ Այդ տարեթվի առթիվ է Լենինը գրել նաև իր «Մարքսիզմի երեք աղբյուրներն ու երեք բաղկացուցիչ մասերը», որ լույս տեսավ մարքսիստական «Պրոսվեշչենիե» ժուռնալի մարտ ամսվա համարում։ Երկու հոդված նույն տարեթվի առթիվ, նույն ուսմունքի նույն հիմնադրի մասին, գրված միևնույն պատմական ժամանակաշրջանում։ Երկու հոդված, բայց տարբեր օրգանների՝ թերթի և ժուռնալի համար, տարբեր ընթերցողների՝ բանվորների ու աշխատավորական լայն մասսաների և առաջավոր բանվորների ու ինտելիգենցիայի համար, տարբեր նպատակադրումներով՝ ագիտացիայի և պրոպագանդայի համար։ Միայն Լենինի հանճարը կարող էր ստեղծել մարքսիզմի տարածման այդպիսի անգերազանցելի ամփոփ ու հստակ, բովանդակությամբ խոր ու մատչելի երկեր, միայն նա կարող էր այդպես փայլուն կերպով զուգակցել ժուռնալիստի ու հրապարակախոսի, թեորետիկի ու մտածողի հատկությունները, հասնել այդպիսի ընդհանրացումների, այդպիսի պարզության, այդպիսի լեգալության, որ այնքան անհրաժեշտ էր մշտապես ցարական գրաքննության մամլակի տակ գտնվող «Պրավդայի» համար։ Այդ ցայտուն առանձնահատկությունները բնորոշ են նաև

թեորիական հարցեր շոշափող լենինյան այլ հոդվածների համար, որոնք «Պրավդան» մեծագույն հաճույքով էր հրատարակում։

Լենինի գրած այս կարգի հոդվածների շարքում մեծ տեղ են գրավում սոցիալական հարցում բոլշևիկյան ծրագրի մշակմանն ու հիմնավորմանը նվիրված նյութերը, ինչպես նաև ազգային խնդրի շուրջը գրած հոդվածները։ Դրանք, ինչպես և լենինյան ամեն մի հոդված, գրված լինելով կոնկրետ առիթներով և հետապնդելով միանգամայն կոնկրետ նպատակներ, միաժամանակ պարունակում են մարքսիստական պարտիայի բուռն գործունեության համար չափազանց կարևոր սկզբունքային դրույթներ։ «Պրավդայի» 1913 թ. № 106-ում Լենինի տպագրած «Բանվոր դասակարգը և ազգային հարցը» հոդվածը, որը ընդամենը մի թերթոն է զբաղեցնում, հիմնավորելով բոլշևիկյան պարտիայի ազգային քաղաքականությունը, ծառանում է բուրժուական ու ոչ հարյուրակային նացիոնալիզմի դեմ, մերկացնում նրա դասակարգային էությունը, ցույց տալիս, որ ամեն մի նացիոնալիզմի նպատակն է «շեղել բանվոր դասակարգն նրա մեծ համաշխարհային խնդիրներից»[13]։ Լենինը հիմնավորում է ազգերի ինքնորոշման ծրագրային թեզը։ «Ո՛չ մի արտոնություն ոչ մի ազգի, ո՛չ մի լեզվի համար,— վճռաբար հայտարարում է Լենինը։—Ո՛չ մի ամենափոքր ճնշում, ո՛չ մի ամենափոքր անարդարություն ազգային փոքրամասնության նկատմամբ—ահա բանվորական դեմոկրատիայի սկզբունքները»[14]։ Մերկացնելով ազգերի ինքնորոշման, «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» մասին բուրժուազիայի գաղափարախոսների կեղծ ֆրազները, Լենինը հոշակում է. «Բոլոր ազգերի բանվորները միասին, համերաշխորեն, ընդհանուր կազմակերպություններում, պաշտպանում են կատարյալ ազատությունն ու կատարյալ իրավահավասարությունը—իսկական կուլտուրայի երաշխիքը»[15]։

Լենինը իր մարտնչող հոդվածներով օպորտունիստներից պաշտպանում է ինտերնացիոնալիզմի դրոշը, ցույց տալիս, որ բանվոր դասակարգը, իր սոցիալական բնույթով ինտերնացիոնալ է, որ նրա շահերը լիովին համերաշխ են ամեն կարգի ազգային ճնշման վերացման հետ։ Այդ կապակցությամբ նա «Պրավդայում» անդրադարձել է նաև ազգային-գաղութային, ազգային-ազատագրական պայքարի հարցերին, մանավանդ Արևելքի ժողովուրդների զարթոնքին՝ նրանց մեջ հատուկ տեղ հատկացնելով չին մեծ ժողովրդին, որի ուժերի նկատմամբ մեծագույն ու արդարացի հավատով էր տոգորված։

---

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 91։

14 Նույն տեղում, էջ 92։

15 Նույն տեղում, էջ 93։ Ազգային հարցի շուրջը լենինյան ցուցումների ոգով 1912—1914 թթ. «Պրավդան» բազմիցս անդրադարձել է նաև հայ ժողովրդի ճակատագրին։ Այդ հարցի շուրջը մասնավորապես հանդես է եկել երիտասարդ պրավդիստ Արտ. Կարինյանը։ «Տրուդովայա պրավդայի» 1914 թ. № 32-ում տպագրված «Արևի գործադուլը և ազգային հարցը» հոդվածում նա հատկապես պաշտպանել է ինտերնացիոնալիզմի սկզբունքները, մատնանշել, որ Կովկասի բանվոր դասակարգը, ներառյալ նաև հայ առաջավոր բանվորները հիանալի գիտեն, որ ամեն մի գիշում նացիոնալիզմին վնասակար է, ռեակցիոն», մերկացրել է դաշնակցության ռեակցիոն բաղաքականությունը, ցույց է տվել, որ այլոց թվում հայկական տպիցիֆիկները ևս իրենց գործունեությամբ փաստորեն մասնատում են պրոլետարական ուժերը, ազգային հատկանիշներով նենգափոխում պրոլետարական շարժման դասակարգային էությունը։ (Հայկական իրականության մեջ 1912—1914 թթ. «Պրավդայի» կատարած խոշոր դերի մասին մանրամասն խոսվում է Մ. Վ. Արզումանյանի «Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին» ծավալուն ուսումնասիրության (1959) վեցերորդ գլխում)։

«Պրավդայում» տպագրված լենինյան հոդվածները նշանավոր ավանդ էին կապիտալիզմի նեխվածությունը մերկացնելու ասպարեզում, ճնշողների ու հարստահարողների դեմ բանվոր դասակարգի մղած պայքարում։ Նա օգտվելով լեգալ թերթի ընձեռած սուղ հնարավորություններից, ցույց էր տալիս այն դառնալեղի վիճակի պատճառները, որի մեջ գտնվում է Ռուսաստանի պրոլետարիատը, մատնանշում այն ուղիները, որով պետք է ընթանա ցարիզմի տապալման համար մղվող ռևոլյուցիոն պայքարը։ Լենինի հոդվածները խորը հավատ էին ներշնչում ընթերցողների մեջ, բորբոքում ցասումն ընդդեմ կապիտալիզմի ու միջազգային իմպերիալիզմի։

Գյուղացիության դասակարգային դիտակցության արթնացման գործում ևս մեծ նշանակություն ունեցան Լենինի ելույթները «Պրավդայում» ընդդեմ կալվածատերերի ու կուլակների։ Նրանցում մերկացվում են ցարիզմը և գյուղացիությունը համաձայնեցնելու կադետական լիբերալ փորձերը, ցույց են տրվում գյուղացիության չարքաշ կյանքի պատճառները։ Լենինը տասնյակ հոդվածներ է նվիրել բանվորների ու գյուղացիների միասնության, ռուսական բանակի և պրոլետարական մասսաների մերձեցման, միջազգային պրոլետարական շարժման հարցերին։

Ինչի մասին էլ գրում էր Լենինը, նրա յուրաքանչյուր հոդվածը, ինչպես նկատում է հին պրավդիստ Ն. Կրուպսկայան, ուղղակի կամ անուղղակի կոչ էր ուղղված բանվորներին ու գյուղացիներին՝ կազմակերպվելու, գործելու, պայքարելու ընդդեմ կապիտալիզմի ու ցարիզմի, ընդդեմ կալվածատիրության ու կուլակների։ Լենինը՝ «Բանվորական օրը Մոսկվայի նահանգի ֆաբրիկաներում» հոդվածում, ուր վեր են լուծված կոնկրետ վիճակագրական տվյալներ և ուր իրերի տրամաբանությունը հանգեցնում է ութժամյա բանվորական օրվա համար հետևողական պայքար մղելու անհրաժեշտությանը, գրում է. «1908 թվականին 8-ժամյա բանվորական օր Մոսկվայի նահանգում գոյություն ուներ միայն 4398 բանվորների համար—հետաղոտված բանվորների 219.669 ընդհանուր թվից։ Նշանակում է, այնուամենայնիվ, 8-ժամյա բանվորական օրը այժմ էլ միանգամայն հնարավոր է, մնում է միայն, որ 215 հազար բանվորները հասնեն այդ չորս հազարին»[16]։

«Պրավդայում» հրապարակված լենինյան հոդվածների շարքում առանձնահատուկ տեղ ունեն նրանք, որոնք գրված են մամուլի հարցերի շուրջը։ Դրանք գլխավորապես նվիրված են «Պրավդա»-ի, նրա սկզբնական շրջանի գործունեությանը և թերթի պատմության վերաբերյալ աղբյուրագիտական ու մեթոդոլոգիական կարևորագույն փաստաթղթեր լինելու հետ միաժամանակ պարունակում են նոր տիպի մամուլի, ամենօրյա թերթի խնդիրների և առօրյա աշխատանքի վերլուծությունը, մի ամբողջ շարք սկզբունքային դրույթներ ռևոլյուցիոն մամուլի մասին։ Դրանցից են «Կիսամյա աշխատանքի արդյունքները», «Բանվորները և «Պրավդան», «Առաջ և հիմա», «Մի բան հանրագումարների և փաստերի վերաբերյալ», «Լուչի» և «Պրավդայի» ընթերցողների ուշադրությանը», «Կապիտալիզմը և մամուլը», «Ռուսաստանի բանվորական մամուլի անցյալից», «Բանվոր դասակարգը և բանվորական մամուլը», «Բանվորական մամուլի օրվա արդյունքների շուրջը» և այլ հոդվածներ։

16 Նույն տեղում, հ. 19, էջ 324—325։

«...Բանվորական մասսաների մեջ խորը և գիտակցական հետաքրքրություն է առաջացել դեպի բանվորական թերթը, այն էլ ո՛չ թե դեպի ընդհանրապես բանվորական թերթը, ինչպիսին էլ որ լինի այն, այլ հատկապես դեպի բանվորական դեմոկրատական թերթը։ Քանի որ մասսաներն ունեն այսպիսի գիտակցականություն և ակտիվություն, ապա սարսափելի չէ ո՛չ մի դժվարություն, ո՛չ մի արգելք»[17],—այսպիսի հետևության հանգեց Լենինը «Պրավդայի» աշխատանքի սկզբնական արդյունքներն ամփոփող ծրագրային հոդվածում։ Իսկ երբ 1914 թ. մայիսի 5-ին (ապրիլի 22-ին) առաջին անգամ նշվեց բանվորական մամուլի օրը և նրա արդյունքները ի մի բերվեց, Լենինը գերագույն, քաղաքական սկզբունքային նշանակություն տվեց այն բանին, թե ովքեր են աջակցում, պաշտպանում, բաժանորդագրվում «Պրավդային» և մեծագույն հրճվանքով եզրակացրեց, որ «Պրավդա» թերթի երկամյա հորելյանի օրը դարձավ մարքսիստական ուժերի հաշվառման օր», որ «գիտակից բանվորների չորս հինգերորդը գնում է պրավդիզմի հետևից»[18]։

Լենինի հոդվածները կազմում էին «Պրավդայի» ամբողջ ոգին, նրա ուղն ու ծուծը։ «Իլյիչի հոդվածները «Պրավդայում»,—մատնանշում է Ն. Կրուպսկայան,— կազմակերպական վիթխարի նշանակություն ունեին, հուզականորեն վարակում էին մասսաներին»[19]։ «Այդ հոդվածները,—գրում է հին պրավդիստներից մեկ ուրիշը,—տառացիորեն եղել են փրկություն խմբագրության համար... Նրանցում, առաջին հերթին, կային ղեկավար ցուցումներ պարտիայի համար, բանվոր դասակարգի համար...»[20]։ Լենինի անունը, նրա հոդվածները մեծ համբավ էին վայելում ամբողջ Ռուսաստանում, ներառյալ նաև Կովկասում։ Մի արխիվում պահպանվում է Կովկասի բոլշևիկների կողմից ՌՍԴԲՊ(բ) Կենտկոմին ուղղված 1913 թ. նոյեմբերի 25-ին Ս. Կասյանի գրած մի նամակը, ուր ասված է. «Մենք խնդրում ենք ընկ. Իլյիչին... որը մեզ մոտ մեծ հարգանք ու հեղինակություն է վայելում, աջակցել մեզ իր հոդվածներով, ուժեղացնել և ամրապնդել մեր ազդեցությունն ու պայքարը։ Մենք կխնդրեինք Իլյիչին մեզ տալ գոնե մի հոդված ռուսական բանվորական շարժման մեջ Կովկասի դերի ու նշանակության մասին։ Նրա անունն մեր օրգանի (խոսքը այդ ժամանակ նախապատրաստվող «Մեր խոսքը» բոլշևիկյան ժուռնալի մասին է.—Մ. Հ.) նշանակությունը իսկույն կբարձրացներ ոչ միայն Կովկասի տարբեր ազգությունների բանվորների, այլև ամբողջ հասարակության մեջ»[21]։

«Պրավդային» աշխատակցելով, Լենինը դրեց բոլշևիկյան մամուլի պատմության ամենափայլուն էջերը, նախանշեց պարտիական օրգանի ու ղեկավար գործչի և մամուլի փոխհարաբերության շրջանակները։ Լենինի անմիջական մասնակցությամբ լույս տեսած «Պրավդայի» համարները (դրանց թիվը հաշվվում է 109), ընդմիշտ կմնա խմբագրական աշխատանքի լավագույն օրինակներ։

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 232.

18 Նույն տեղում, հ. 20, էջ 694 և 697։

19 Н. Крупская, Ленин редактор и организатор партийной печати. стр. 25.

20 «Правда». 1922, № 98.

21 «Исторический архив», 1957, № 1, стр. 5 (մեջբերումը կատարվում է ըստ Մ. Արզումանյանի նշված գրքի, էջ 325)։

* * *

Վ. Ի. Լենինը «Պրավդային» ուղղություն և ղեկավարություն էր ցույց տալիս նաև իր նամակներով։ Այդ նամակները «Պրավդայի» նկատմամբ Լենինի դրսևորած անդերազանցելի հոգատարության փայլուն արտահայտությունն են։ Դրանք, ինչպես նաև Լենինի բազմաթիվ հոդվածները, միաժամանակ լավագույն սկզբնաղբյուրներ են «Պրավդայի» պատմությունն ուսումնասիրողների համար, մամուլի թեորիական հարցերի և պրակտիկ գործունեության մեջ խորամուխ լինելու համար։ Կարդալով 1912—1914 թթ. «Պրավդային» ուղղված Լենինի նամակները, դժվար է պատկերացնել, որ հարյուրավոր կիլոմետրեր Լին բաժանում Լենինին «Պրավդայից», որ նա արտասահմանում էր, իսկ «Պրավդան» Պետերբուրգում։ Լենինը միշտ ու բոլոր հարցերում «Պրավդայի» հետ էր, նրա առօրյա աշխատանքի կենտրոնում։ Հեռվից նա իր ձեռքն էր վերցրել «Պրավդայի» ղեկը և այն վարում էր, իրոք, անօրինակ հմտությամբ՝ բնավ չխախտելով թերթի ղեկավարման կոլեգիալ սկզբունքը, երբեք չդիպչելով խմբագրության ղեկավար, նույնիսկ շարքային աշխատողների ինքնասիրությանը։ Ոչինչ, բացարձակապես ոչինչ չի վրիպել Լենինի զգոն ուշադրությունից։ Նա ընդգրկել է բոլոր այն լայնածավալ հարցերը, որ առնչվում էին թերթի գրվածքի, հրատարակման ու տարածման հետ՝ սկսած թղթից ու տպագրանակից մինչև հեղինակներն ու խմբագրության աշխատողները։ Նա անողոք էր, երբ «Պրավդան» սկզբունքային սխալ էր կատարում, բայց և հրճվում էր, երբ թերթը ճիշտ գիրք էր գրավում։ Միայն Լենինի տիտանական, գործնականում անընդգրկելի աշխատանքի դեպքում է հնարավոր պատկերացնել այն ամենը, ինչ նա արել է «Պրավդայի» համար, «Պրավդայի» հետ՝ 1912—1914 թթ.։

«Պրավդային» ուղղված Լենինի նամակագրության շարքում ամենամեծ տեղն են գրավում լիկվիդատորների դեմ սկզբունքային, հարձակողական դիրք գրավելու մասին նամակները։ Ջսքողել հակասությունները, չշրջանցել «հիվանդոտ հարցերը», չխուսանավել «պարտիան քայքայող» լիկվիդատորների առաջ,—խորհուրդ էր տալիս Լենինը «Պրավդային» և համբերատար կերպով բացատրում լիկվիդատորների դեմ հանդես չգալու, նրանց չմերկացնելու դիրքի վնասակարությունը պարտիայի համար, ռևոլյուցիոն շարժման համար։ Այդ անելով, նա միաժամանակ առանձին դեպքերում խստորոշ պահանջներ էր դնում խմբագրության առջև։ «...Ինչո՞ւ է «Պրավդան» համառորեն, սիստեմատիկորեն ջնջում և՛ իմ հոդվածներից, և՛ ուրիշ կոլեգաների հոդվածներից լիկվիդատորների վերաբերյալ հիշատակությունները»,—հարցնում է Լենինը և պահանջում ուղղակի պատասխան տալ արմատական հարցին. «...Խմբագրությունը մտադի՞ր է արդյոք թերթի ընտրական բաժինը վարել լիկվիդատորներին հակառակ... թե՞ ոչ հակառակ»[22]։

Խմբագրության աշխատողներին խրտնեցնում էր Լենինի ցասկոտ տոնը. «Այդ ո՞ր պահից է, որ ցասկոտ տոնը այն բանի դեմ, ինչ վատ է, վնասակար է, սխալ է... վնասում է ամենօրյա թերթին.—հարցնում է Լենինը և բացատրում.—Ընդհակառակը, կոլեգաներ, աստված վկա, ընդհակառակը։ Առանց «ցասման» գրել վնասակարի մասին—նշանակում է, տխուր գրել»[23]։

---

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 31 և 32։

23 Նույն տեղում, էջ 32։

Մի այլ անգամ՝ 1912 թ. հոկտեմբերին Լենինը խոցող խոսքեր է ուղղում «Պրավդայի» հասցեին և պահանջում բարձր պահել մարքսիստական թերթի կոչումը. «...«Պրավդան» այժմ, ընտրությունների ժամանակ, իրեն պահում է քնկոտ պառաված աղջկա նման։ ...Նա չի հարձակվում, չի հետապնդում ո՛չ կադետին, ո՛չ էլ լիկվիդատորին... Մի՞թե դա մարքսիզմին նման է»[24]։ Լենինն իր ցողոքն է հայտնում թերթը «ղեկավարող կոլեգաների վարքագծի» դեմ, առաջադրում իր կոնկրետ պլանը, բացատրում, թե ինչ է հարկավոր անել, թե ինչ վտանգներով է լի նրանց այդ դիրքը։

Երբ «Պրավդան» տպագրեց թերթին ուղղված օպորտունիստ Բոգդանովի նամակը և նրան կցեց «անհեթեթ» ծանոթագրություն, Լենինը հիշեցրեց, որ խմբագրությունը խախտել է պայմանը՝ «նման բաներ չտպագրել առանց կապվելու», և պահանջեց ուղղել սխալը, պատշաճ պատասխան տալ Բոգդանովի «հիմար և լկտի նամակին»։ Իսկ երբ «Պրավդայի» № 98-ում լույս տեսավ Ա. Վիտեմսկու (Մ. Օլմինսկի—Մ. Հ.) «Կուլտուրական մարդիկ և անմարդ խիղճ»[25] վերնագրով «հրաշալի հոդված» հոդվածը, Լենինը մատնանշեց, որ «չափազանց տեղին է վերցված թեման և մշակված է համառոտ, բայց հիանալիորեն պարզ»։ Այդ առթիվ էլ Լենինը խորհուրդ տվեց խմբագրությանը հաճախակի անդրադառնալով նարոդնիկական դեմոկրատիայի գրողներին։ Երբ Լենինին հայտնի դարձավ, որ «Պրավդան» չի տպագրել «Պետերբուրգի բանվորների նակազը իրենց բանվորական դեպուտատին», պահանջեց խմբագրությունից. «...Նակազն անպայման զետեղեցեք աչքի ընկնող տեղում խոշոր տառերով»։ Այդ նամակում ևս Վ. Ի. Լենինը բոլշևիկյան մամուլի գրվածքի համար սկզբունքային ցուցումների հանդեց. «Մի՞թե բանվորական թերթը կարող է գոյություն ունենալ, եթե նա այդպես արհամարհանքով վերաբերվի այն բանին, ինչ հետաքրքրում է բանվորներին...։ Չէ որ թերթը այնպիսի մի բան չէ, որ ընթերցողը կարդում է—գրողը գրոտում։ Թերթն ինքը պետք է փնտրի, ժամանակին գտնի և իր ժամանակին զետեղի հարկավոր նյութը»[26]։

Իր նամակներում Լենինը պահանջում էր ժամանակին և պատշաճ ձևով անդրադառնալ կարևոր տարեթվերին և նույնիսկ հատուկ պլան էր առաջարկում առանձին հոբելյաններ նշելու մասին։ Ցարական դրաքննության արգելքներից խուսափելու, թերթը հալածանքներից, տուգանքներից ու բռնագրավումներից պահպանելու համար, նա երբեմն պարտադիր էր համարում մեղմել թերթի տոնը, լեգալության հասնել։ «Լեգալություն, լեգալություն անպայմանորեն», «ի սեր աստծո, ավելի քիչ կծվություն»[27], գրում է նա,—և ինքն էլ տալիս դրա հիանալի օրինակը. 1912—14 թթ. ռեպրեսիայի են ենթարկվել «Պրավդայի» 190 համարները, որից հինգ դեպքում միայն Լենինի հոդվածների պատճառով։

1912 թ. վերջերին և 1913 թ. սկզբներին, երբ խմբագրությունը «խուլ-թշնամական» դիրք էր գրավել և խանդարում էր պարտիային «Պրավդան»

---

24 Նույն տեղում, հ. 36, էջ 200—201։

25 Մ. Ս. Օլմինսկու հոդվածների ժողովածուի 1956 թ. հրատարակության մեջ այս հոդվածը տեղ չի գտել։ Այն հրատարակված է «Ленин—журналист, редактор» գրքում (էջ 132), ուր բերված է նաև լենինյան գնահատականը։

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 52։

27 Նույն տեղում, էջ 116, 117։

նպատակասլաց օգտագործել, Լենինի խիստ պահանջով խմբագրությունում ռեֆորմ կատարվեց և թերթն այնքան լավացավ, որ 1914 թ. մարտին Լենինը գրեց. «Իսկ որքա՞ն է լավացել «Պրավդան» ...ուղղակի գեղեցկուհի է դառնում։ Հաճելի է նայել»։

Այդ ռեֆորմը պարտիայի Կենտկոմի Ռուսական բյուրոյի հանձնարարությամբ ու որոշմամբ[28], պարտիայի Կենտկոմի մյուս անդամների հետ միասին սկսեց իրագործել Յա. Սվերդլովը, որից Վ. Ի. Լենինը պահանջում էր «....ձեռնամուխ լինել «Դեն»-ի («Պրավդայի»—Մ. Հ.) ռեֆորմին», այնտեղ «նստացնել... մեր խմբագրությունը և ցրել ներկայիս խմբագրությունը», «...վերջ տալ այդ վայ-խմբագիրների այսպես կոչված «ավտոնոմիային», «իր ձեռքը վերցնել խմբագրությունը»[29]։ Այդպիսի կտրուկ և վճռական հարցադրումը բխում էր նրանից, որ Լենինը ստեղծված իրադրության մեջ «Պրավդային» անսահման բարձր և լիովին արդարացված նշանակություն էր տալիս։

Անգնահատելի է Լենինի հոդատարությունը «Պրավդայի» շուրջը հեղինակային ակտիվ համախմբելու, կարող ուժերով ամրապնդելու, անվանի գրողներին ու գրականագետներին նրա հետ կապելու և նրանց նկատմամբ ուշադիր ու սրտացավ վերաբերվելու գործում։ Այդ հոգատարությունն իր արտացոլումն է գտել Լենինյան բազմաթիվ նամակներում։ Նա ձգտում էր և հասավ այն բանին, որ «Պրավդան» ստեղծվի հենց իրենց՝ բանվորների ուժերով, նրանց նյութերի հիման վրա, որ նրանք թերթին աշխատակցեն համարձակ, հանձին նրա տեսնեն իրենց ամենայուվագույն բարեկամին։ Լենինի ջանքերով ու հորդորներով էր, որ Մ. Գորկին աշխատակցեց ««Պրավդային», որ թերթի խմբագրությունը կապ հաստատեց մի շարք գրականագետների հետ և նրանցից արժեքավոր հոդվածներ ստացավ։ Խմբագրության ուշադրությունը նա հրավիրում էր այնպիսի «աննշան» հարցերի վրա նույնիսկ, որպիսիքն են թղթակիցների նամակներին ժամանակին պատասխանելը, հոնորար ուղարկելը, որոշ հեղինակների ավանս տալը, չտպագրվող հոդվածները վերադարձնելը կամ այլ խմբագրությունների հանձնելը։

Լենինյան նամակներում, ինչպես նաև հոդվածներում արտացոլված ցուցումներն ու սկզբունքները պարտիայի՝ մամուլի մասին ընդունած որոշումների հետ միասին դրվեցին սովետական մամուլի, նոր տիպի մամուլի տեսական սկզբունքների մշակման ու պրակտիկ գործունեության ծավալման հիմքում։

* * *

«Պրավդայի» լույս ընծայումը հսկայական խանդավառությամբ ընդունեցին բանվոր-պրավդիստները, որոնք սերտորեն կապվեցին նրա հետ, նրան ուղարկեցին իրենց թղթակցությունները Ռուսաստանի բոլոր կողմերից։

Իր գոյության ամբողջ ընթացքում՝ 1912—14 թթ. թերթը տպագրեց մոտ 17 հազար բանվորական նամակներ ու թղթակցություններ, որից 10 հազարը գործադուլների մասին։ Միայն իր գոյության առաջին տարում «Պրավդան» տպագրել է գործարանատերերի և ֆաբրիկանտների դեմ մղվող պայքարին

28 Լենինի կազմած նախագիծը «Պրավդայի» խմբագրության վերակառուցման մասին քննարկվել և ընդունվել է պարտիայի կրակովյան խորհրդակցությունից անմիջապես հետո կայացած Կենտրոնական Կոմիտեի նիստում։ Այն առաջին անգամ Լենինի երկերի ժողովածուի մեջ է մտել այժմ իրականացվող հինգերորդ հրատարակության ժամանակ (տե՛ս Т. 22, стр 269—270)։

29 Վ. Ի. Լենին. Երկեր. հ. 35, էջ 67, 68։

նվիրված մոտ 270 հոդված։ «Պրավդայի» հետ կենդանի կապ էին հաստատել հազարավոր ու հազարավոր բանվորներ, որոնք կոլեկտիվ կերպով թղթակցում էին նրան, քննարկում շատ նյութեր, մասնակցում թերթի հրատարակման գործին։ Թերթը դարձել էր բանվորական մասսաների լավագույն խորհրդատուն, բարեկամը, պաշտպանը, նրանց պայքարի ու նպատակների արտահայտիչը, տրիբունը։ Լինում էին դեպքեր, որ բանվորները իրենց շահագործողներին սպառնում էին «Պրավդայով», իսկ հաճախ գործադուլ անում թերթի նյութերի անմիջական ազդեցության տակ։

Թե որքան սերտ էր «Պրավդայի» և բանվորների կապը, թե որքան անձնուրացությամբ էին պրոլետարական մասսաները նվիրված իրենց տպագիր օրգանին, պերճախոս կերպով վկայում են հետևյալ թվերը. 1912—1913 թթ. և 1914 թ. հունվար-մայիսին «Պրավդայի» օգտին գրամական մուծումներ են կատարել 5.674 բանվորական խմբեր, իսկ նրա հակառակորդ լիկվիդատորական ուղղության գրականության համար ընդամենը՝ 740։ Երբ ցարական կառավարությունը փորձում էր ծանր տուգանքներով խեղդել ֆինանսական սուղ միջոցներ ունեցող «Պրավդան», բանվորներն իրենց խնայողություններով փրկում էին թերթը։ Երբ անհրաժեշտ էր լինում, որ որևէ մեկը պաշտոնապես ստանձնի թերթի խմբագրի պարտականությունը, և նախապես համաձայնվի դատապարտվելու դեպքում թերթի իսկական խմբագրի փոխարեն բանտ նստել, ապա իրենց համաձայնությունն էին տալիս մի քանի, այսպես կոչված «Զից-խմբագիրներ»։ Երբ հարկ էր լինում բանտարկության դատապարտված խմբագրին ազատելու համար խոշոր գումարներ մուծել, դարձյալ հանդես էին գալիս բանվորները։ «Պրավդայի» նկատմամբ Ռուսաստանի պրոլետարիատի տածած բուռն սիրո զգացմունքը վառ կերպով դրսևորվեց բանվորական մամուլի օրը նշելիս, երբ այն վերածվեց մարքսիստական ուժերի, «Պրավդայի» ուղղության թերթերի ստուգատեսի։

Բայց միայն պրոլետարական մասսաները չէին այդպես սերտորեն կապված «Պրավդայի» հետ։ Այն իրենց թերթն էին համարում նաև աշխատավորական մյուս զանգվածները, և, իրոք, «Պրավդան» հավասարապես պայքարում էր նաև գյուղացիության, ուսանողության, արհեստավորների, ինտելիգենցիայի շահերի համար։ «Պրավդան» իր առաջին իսկ համարներից սկսած խոշոր դեր կատարեց այն հիմքերի մշակման համար, որոնց հիման վրա գյուղացիությունը 1917 թ. ռևոլյուցիայում հանդես եկավ բանվորների հետ սերտ դաշնակցած։

Լայն ու բազմակողմանի է ռեալիստական արվեստի համար թերթի ծավալած պայքարը, խոր ու արմատական են նրա առաջադրած հարցերն ու պրոբլեմները։ Միայն մեկ տարվա ընթացքում «Պրավդան» գրականության, թատրոնի ու դեղանկարչության հարցերին է նվիրել 119 հոդված։ Բուրժուական անկումային արվեստի քննադատությունը, անցյալի մշակութային ժառանգության ճիշտ գնահատությունը, մասնավորապես ռևոլյուցիոն-դեմոկրատների պրոպագանդան, «մաքուր արվեստի» ռեակցիոն թեորիայի մերկացումը, իսկ այդ բոլորից առաջ պրոլետարական գրականության զարգացումը միշտ էլ գտնվել են թերթի ուշադրության կենտրոնում։ Խմբագրությանը կից ստեղծված գրական խմբակում բանվոր-գրողները վարպետություն էին ձեռք բերում։

«Պրավդան» կարողացավ դիմանալ ոչ միայն ցարական գրաքննության հալածանքներին, այլև հաղթահարել դրանք՝ զարմանք պատճառելով նույնիսկ

ցարիզմի ագենտներին։ Ցարական կառավարությունը «Պրավդայի» խմբագիրներին ընդհանուր առմամբ բանտարկության է դատապարտել 472 ամսով, իսկ գրաքննությունը ռեպրեսիայի է ենթարկել թերթի գրեթե յուրաքանչյուր 3 համարից մեկը։ Թերթի տուգանքների և բռնագրավված համարների ետ գնման (մեկ համարի ետգնման համար պահանջվում էր 300 ռ.) ընդհանուր գումարը երկու տարվա ընթացքում հասավ շուրջ 55 հազարի։ Եվ այսուամենայնիվ «Պրավդան» շարունակում էր ապրել, նրա արգելված համարները տարածվում էին, նա իր գործն էր կատարում։

Լենինյան ցուցումների կենսագործման արդյունքն է նաև այն, որ «Պրավդան» հրապարակ եկավ լայնագույն ծրագրով, որ նա օգտագործեց լրագրային ամենատարբեր ժանրերն ու ձևերը, որ նա ունեցավ և միշտ պահպանեց իր բաժինների բազմազանությունը։

«Պրավդան» օրինակ էր բոլշևիկյան մյուս օրգանների, այդ թվում նաև հայ բոլշևիկյան մամուլի համար։ Նրան ոչ միայն ընդօրինակում, ոչ միայն հետևում էին բոլշևիկյան մյուս թերթերը, այլև պարբերաբար արտատպում էին նրա նյութերը և նրա օրինակով պայքար մղում ցարիզմի դեմ, պարտիայի թշնամիների դեմ։

Մինչհեղափոխությունը «Պրավդան» տարածվում էր նաև արտասահմանում և այնտեղ ևս կատարում իր մեծ դերը միջազգային բանվորական շարժման գործում։ Դրան զուգընթաց թերթը համարից համար լուսաբանում էր եվրոպական և ամերիկյան երկրների պրոլետարական շարժումները, քաղաքական կյանքի այն իրադարձությունները, որոնք նպաստում էին Ռուսաստանի բանվոր դասակարգի, բոլշևիկյան պարտիայի պայքարին։ Այդ ուղղությամբ մեծ ղեր էին կատարում Կենտրոնական Կոմիտեի բյուրոն և անձամբ Վ. Ի. Լենինը։ Կարևորագույն նշանակություն տալով թերթի արտասահմանյան բաժնին, որը լրագրի մշտական ու մարտական բաժիններից մեկն էր, Լենինը ինքը ստանձնել էր նրա համար նյութեր մատակարարելու դժվարին գործը։ Այնտեղ են տպագրվել Լենինի մի շարք հոդվածները, որոնք այդ բաժնի մյուս նյութերի հետ միասին Ռուսաստանի պրոլետարիատին դաստիարակում էին ինտերնացիոնալիզմի ոգով, համախմբում պրոլետարական համընդհանուր պայքարի դրոշի ներքո։

«Պրավդան» իր գոյության ամբողջ ընթացքում հակադրվել է ու հակադրվում է կապիտալի աշխարհի կեղծիքին, ճշմարտությունը հասցնում է մարդկությանը, հարյուր միլիոնավոր աշխատավորներին։ Նրա խոսքը թևածում է համայն երկրագնդի վրա, անցնում արգելափակոցները, հաղթահարում ամեն կարգի խոչընդոտներ։

Կես դար է անցել այն օրից, ինչ երևան է եկել «Պրավդան»՝ իր թիկունքում ունենալով պրոլետարներին, աշխատավորներին։ Այսօր էլ նրա հենարանը, նրա հերոսները, նրա ստեղծողները աշխատանքի մարդիկ են։ Այլ նպատակ, ուժի ուրիշ աղբյուր նա չի ունեցել և չունի։ Նրա արմատները ձգվում են մինչև անցած դարի խորքերը, մինչև Մարքսի ու Էնգելսի ոգեկոչած ապատ, աշխատավորական մամուլի ակունքները։ Նա միշտ հարազատ է մնայել լենինյան ոգուն ու տրադիցիաներին, պրոպագանդել է մարքս-լենինյան գաղափարները, աճեցրել ու դաստիարակել է ռևոլյուցիոն նոր սերունդ, ինքն էլ նրա հետ աճելով։ Անցյալից եկող իր արմատներով նա հենվել է իրօրյա իրականության վրա, իբրև փարոս լուսավորել գալիքի ճամփան։

Երբ իմպերիալիստական պատերազմի նախօրյակին ցարիզմը «ջախջախեց» «Պրավդան», նա արդեն ամուր հենարան ուներ ռևոլյուցիոն ոգով տոգորված աշխատավորության սրտում, իսկ երբ ցարիզմը տապալվեց, նա անմիջապես իբրև պարտիայի Կենտրոնական Կոմիտեի օրգան նորից վերածնվեց ու ձեռնամուխ եղավ սոցիալիստական ռևոլյուցիայի նախապատրաստությանը։ Այս անգամ էլ ականավոր մյուս պրավդիստների հետ, նրա ոգեկոչողն ու անմիջական ղեկավարը Վ. Ի. Լենինն էր։ Նա արտասահմանից ողջունեց թերթին և ամեն ինչից առաջ նրա համար հոդվածներ գրելուն էր հատկացնում իր բանկ ժամանակը։ 1917 թ. ապրիլի 4-ին, էմիգրացիայից վերադառնալու հենց հաջորդ օրը նա եղավ «Պրավդայի» խմբագրությունում, իսկ երկու օր հետո հաղորդվեց, որ նա մտել է թերթի խմբագրական կազմի մեջ։ Այս անգամ էլ Լենինը ժուռնալիստական-պրոպագանդիստական բուռն գործունեություն ծավալեց, թերթը դարձրեց Հոկտեմբերյան ռևոլյուցիան նախապատրաստող օրգան, նրանում հրապարակեց պարտիային ու ռևոլյուցիոն շարժումներին ուղղություն տվող հոդվածներ, որոնց ընդհանուր թիվը անցնում է 200-ից։ Դրանց թվում են հռչակավոր «Ապրիլյան թեզիսները»։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո «Պրավդան», Լենինի մատնանշած ուղիով ընթանալով, դարձավ նորաստեղծ Սովետական իշխանության դիպուկ զենքը։ Նրա էջերից աշխարհին հայտնի դարձան ու ժողովրդի սրտում արձագանք գտան առաջին դեկրետները, նրանով աշխատավորությանը հասավ Իլյիչի անկաշկանդ ձայնը, Սովետների ցուցումները, նոր կյանք կերտելու կոչերը, նոր հասարակարգի սկզբունքները։ «Պրավդան» առաջինը մերկացրեց ցարական կառավարության դավերը ժողովրդի դեմ, ռևոլյուցիայի թշնամիներին, միջազգային իմպերիալիզմը։ «Պրավդան» ոչ միայն մեծ դեր կատարեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի նախապատրաստման, այլև երիտասարդ Սովետական իշխանության ամրապնդման գործում։

«Պրավդան» դարձավ սովետական ժողովրդի՝ պատմությանն անծանոթ սխրագործությունների տարեգրությունը, արտացոլեց հասարակական կյանքի բոլոր հարցերն ու խնդիրները, մատնանշեց այն մայր ուղին, որով պիտի ընթանա ճնշողներին տապալած աշխատավորության մամուլը, մարմնավորեց հին մամուլից բոլորովին տարբերվող պարտիական-սովետական տպագիր օրգանների սկզբունքները։ Նա Լենինի ցուցումների ոգով դարձավ տնտեսական-կուլտուրական շինարարության պրոպագանդիստը, ագիտատորն ու կազմակերպիչը, տվեց այն բանի օրինակը, թե ինչպես պետք է սովետական նորաստեղծ մամուլը պայքարի մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի համար։

Հայրենական Մեծ պատերազմի հերոսական տարիներին «Պրավդան» պարտիայի ձեռքում հզոր. հեռահար զենք էր, որ խփում էր դիպուկ, անխափան, գործում էր ռազմաճակատի բոլոր խրամատներում ու խոր թիկունքում, մերկացնում էր թշնամու հերյուրանքները ու կազմակերպում սովետական ժողովրդին։

Հետպատերազմյան տարիներին, պարտիայի պատմական XX, XXI, XXII համագումարներից հետո թերթն ավելի բուռն գործունեություն ծավալեց՝ նոր պատմական որոշումների իրագործման, լենինյան ոգու լիակատար հաղթանակի, անհատի պաշտամունքի ծանր հետևանքները վերացնելու համար։ «Պրավդան» խաղաղության մեծ դրոշակակիրն է ամբողջ աշխարհում։ Նա սովետական մամուլի, սոցիալիստական երկրների նոր մամուլի, Կոմունիստական պարտիաների ամբողջ մամուլի ուղենիշ աստղն է, սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարի լավագույն տրիբունը։